

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սովետական դրականության անբաժանելի մի մասն է կազմում ֆոլկլորագիտությանը: Միութենական ռեսպուբլիկաներում և Մոսկվայում հատուկ դիտական հիմնարկներ զբաղվում են ինչպես ժողովրդական բանահյուսության հետազոտությամբ, այնպես և բանահյուսական նյութերի հավաքմամբ ու հրատարակությամբ: Ամեն տարի բաղմահագար տիրաժներով մասսայական հրատարակությամբ լույս են տեսնում ՍՍՌԽ ժողովուրդների բանահյուսության լավագույն երկերը (էպոս, հեքիաթ, երգ և այլն):

Մեզ մոտ՝ Հայաստանում ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության հարցերով հատկապես զբաղվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորը: Սեկտորը մինչ այժմ հրատարակել է մի շարք աշխատություններ՝ հայկական ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի տեքստերի հրապարակում, տեսական հարցերի հետազոտում և այլն:

Ուշագրության արժանի են սեկտորի դիտաշխատողներ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ Ա. Ղանալանյանի¹ և Հ. Զնդիի² աշխատությունները, որոնք լույս են տեսել վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ: Այդ աշխատություններին է նվիրված մեր զրախոսությունը:

* * *

Ա. Ղանալանյանի աշխատությունը կրում է «Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր» խորագիրը և նվիրված է գերազանցապես տեսական հարցերի:

Ընկ. Ղանալանյանն իր աշխատության մեջ, հաշվի առնելով նախորդ հետազոտողների փորձը, աշխատել է պարզարանել ու ճշտել մի քանի հարցեր, որոնք կարևոր տեղ են գրավում մարքսիստական ֆոլկլորագիտության մեջ: Այդ հարցերի արծարծումն ու պարզարանումն էլ ինքնին անհրաժեշտություն ու նշանակալից արժեք են ներկայացնում հատկապես հայ ֆոլկլորագիտության համար:

Ընկ. Ղանալանյանի աշխատությունն ունի ընդարձակ ներածություն, որտեղ հեղինակը ընդհանուր գծերով բնութագրում է ժողովրդական բանահյուսությունը, վերհանում նրա զաղափարական և գեղարվեստական բարձր արժանիքները: Այնուհետև, ներածության մեջ խոսվում է ժողովրդական բանահյուսության դերի ու նշանակության մասին գեղարվեստական դրականության, պատմագրության ու կուլտուրայի այլ բնագավառներում: Այս հարցերի մասին խոսելիս հեղինակը օգտագործում է սոցիալիստական ռեալիզմի դրականության հիմնադիր և մարքսիստական ֆոլկլորագիտության խոշոր ներկայացուցիչ Ա. Մ. Գորկու դիտողություններն ու կարծիքները: Ընկ. Ղանալանյանն ընդգծում է աշխատավոր ժողովրդի բանավոր գեղարվեստական ստեղծագործության ուժն ու կենսունակությունը, մի հանգամանք, որ թերագնահատվել ու անտեսվել է բուրժուական դրականագիտության ու պատմագրության կողմից, այնպես ինչպես

¹ Ա. Ղանալանյան, ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր, 1954, էջ 140:

² Քյոռ-օղլի էպոսի երգական պատմությունը, Գրառումը, թարգմանությունը և ներածությունը Հ. Ջևդիի, 1953, էջ 238:

թերագնահատվել ու անտեսվել է ժողովրդի դերը հասարակության պատմության դարգացման պրոցեսում: Մինչդեռ, ինչպես Ա. Մ. Գորկին է ասել «Ժողովուրդը ոչ միայն բոլոր նյութական արժեքներ ստեղծող ուժն է, նա միակ և անսպառ աղբյուրն է հողեր արժեքների, ստեղծագործության ժամանակի, ղեկեցկության ու հանճարեղության տեսակետից առաջին փիլիսոփան ու բանաստեղծը, որն ստեղծել է բոլոր մեծ պոետները, երկրագնդի բոլոր ողբերգությունները և այդ արժեքներից մեծագույնը՝ համաշխարհային կուլտուրայի պատմությունը»¹:

Գրախոսվող աշխատության ներածությունը չի սահմանափակվում միայն վերոհիշյալ հարցերով: Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում մարքսիզմի կլասիկների ասույթների վրա՝ ժողովրդական բանահյուսության մասին: Այդ ասույթները շատ կարեւոր են մարքսիստական ֆոլկլորագիտության հարցերի ու պրոբլեմների մշակման տեսակետից:

Ներածությունից հետո գրախոսվող աշխատության հեղինակն անցնում է մի քանի հարցերի քննարկմանը:

Առաջին հիմնական հարցը, որ մանրամասնորեն վերլուծման է ենթարկում Բնկ. Ղանալանյանը իր աշխատության մեջ, ժողովրդական բանահյուսությունն իրեն վերնաշենքային երևույթի և նրա սպեցիֆիկ առանձնահատկությունների հարցն է: Ծննդով Բաղիսի և վերնաշենքի մասին եղած մարքսիստական ուսմունքից, հեղինակը ժողովրդական բանահյուսությունը ներկայացնում է որպես վերնաշենքային երևույթ: Այս առթիվ նա մեծ մասամբ օգտագործում է դիցարանության և էպոսի մասին Մարքսի և Էնգելսի բնութագրումները: ցույց տալով ժողովրդական բանահյուսության սկզբնական շրջանի ստեղծագործությունների բնույթը և նրանց սերտ կապն ու պայմանավորվածությունը հասարակության տնտեսական դարգացման տվյալ աստիճանի հետ: Այս կապակցությամբ ցույց է տրվում հասարակական-տնտեսական այն պայմանները, որոնց մեջ կարող էր ստեղծվել էպոսը և դրա հետ կապված նրա պեղարվեստական բարձր աստիճանը: Վերնաշենքի ու Բաղիսի փոխհարաբերությունների ու վերնաշենքի խաղացած ակտիվ դերի մասին խոսելով հեղինակը պարզաբանում է, որ ժողովրդական բանահյուսությունը իր լավագույն մասով ակտիվ դեր է խաղում և օգնում ու կազմակերպում է հասարակության բնդերբում աճող նոր պրոգրեսիվ ուժերին:

Ժողովրդական բանահյուսությունը բնութագրելով որպես վերնաշենքային երևույթ Բնկ. Ղանալանյանն այնուհետև անդրադառնում է վերնաշենքային երևույթների մեջ ժողովրդական բանահյուսության սպեցիֆիկ առանձնահատկություններին: Ժողովրդական բանահյուսության հիմնական սպեցիֆիկ պծերը, որոնք բանահյուսությունը դանդաղանում են արվեստի ու գրականության մյուս ճյուղերից, Բնկ. Ղանալանյանը, ճշմարտացիորեն, համարում է հետևյալները՝ ժողովրդական բանահյուսության՝ սկզբնավորումով անհատական, իսկ հասարակական բնկավմամբ կոլեկտիվ ստեղծագործություն լինելու հանգամանքը, այդ ստեղծագործության օրդանական ու սերտ կապը արվեստի մի քանի ճյուղերի (երաժշտության, պարարվեստի, դրամատիկ ծիսական արարողության) հետ և ժողովրդական բանահյուսության ստեղծման ու տարածման բանավոր տրադիցիան: Ինչ վերաբերում է հեղինակի այն բնութագրմանը, որ ժողովրդական բանահյուսությունն արտահայտել է հասարակության ճնշող մեծամասնության՝ աշխատավորական մասսաների մրտքերն ու զգացմունքները, կամ թե մասսաների տարերային, մատերիալիստական աշխարհայացքի նշանները, ապա պետք է ասել, որ դա, անշուշտ, ներհատուկ է ժողովրդական բանահյուսությանը, բայց ոչ որպես սպեցիֆիկ առանձնահատկություն: Այս հարցերի առթիվ տեսական բնութագրումներին զուգահեռ կոնկրետ օրինակները համեմատաբար քիչ են: Մինչդեռ համապատասխան տեղերում տարբեր ժողովուրդների բանահյուսության այլևայլ ժանրերից բերվող կոնկրետ երկերի օրինակներով ավելի հանրամատչելի ու համոզիչ կդառնային տեսական բնութագրումներն ու սահմանումները:

Հաջորդ հիմնական հարցը, որ հանդամանորեն քննարկվում է Բնկ. Ղանալանյանի աշխատության մեջ, դա հասարակական մտքի տարրեր հոսանքների ներկայացուցիչների կողմից ժողովրդական բանահյուսության ղնահատկության հարցն է: Ճիշտ է, այստեղ ժողովրդական բանահյուսությունը օրյեկտ է ծառայում հասարակական մտքի տարրեր հոսանքների վերարբմունքը որոշելու համար, բայց հենց այդ վերարբմունքով էլ վերջին

¹ М. Горький, Статьи 1915—1916 г., изд. «Паруса», 1916, стр. 9.

հաշվով բնութագրվում են ժողովրդական բանահյուսության հասարակական-ճանաչողական տարրեր ֆունկցիաները: Հեղինակը լուրջ աշխատանք է կատարել ժողովրդական բանահյուսության սլափումների առանձին հտապների, բանահյուսական տարրեր զարոցների և ուղղությունների բնութագրման, նրանց դասակարգային արժատների բացահայտման խնդրում, միշտ առաջնորդող սկզբունք ունենալով Վ. Ի. Լենինի հայտնի զրույթը միևնույն ազդի կուլտուրայի մեջ երկու ազգային կուլտուրաների առկայության մասին:

Հեղինակը համոզիչ փաստերով մեկնաբանում և քննադատում է բուրժուական ֆոլկլորագիտության մի շարք զարոցների և ուղղությունների ոեակցիոն էությունն ու սխալները: Հատկանշական է այս տեսակետից մի ֆոլկլորական (առասպելաբանական), փոխառությունների կամ թափափուկ սյուժեների և սոցիոլոգիական ֆոլկլորագիտական զարոցներին սլափանոց եվրոպական, ուսական ու հայկական բանասերների հայացքների ու բնութագրերի քննադատությունը: Ընկ. Ղանալանյանը անդրադառնում է նաև Ն. Մառի և նրա հետևորդների կողմից ժողովրդական բանահյուսության մեջ կիրառվող «չորս էլեմենտների», «սեմանտիկ փնջերի», «ստագիալականություն», մի խոսքով՝ «լեզվի նոր ուսմունքի» մեթոդին և խիստ քննադատության ենթարկում գիտական հիմքերից զուրկ նրա «հնէաբանական վերլուծությունը»: Այստեղ, մեր կարծիքով, Մառի սխալների քննադատության հետ մեկտեղ հարկավոր էր մի քանի խոսքով նշել նրա հաջողված աշխատանքների մասին՝ բանահյուսության ասպարեզում:

Ռուս ուսուցիչ-ղեմոկրատներ Իելինսկու, Բորոյուրովի, Չերնիշևսկու և նրանց գիտակից հայ ուսուցիչ-ղեմոկրատ Մ. Նալբանդյանի աշխատություններից բերված քաղվածքներով և փաստարկներով հեղինակը ապացուցում է, որ ժողովրդական բանահյուսության մասին ունեցած սլափերացումներն ու բնութագրերը ամբողջովին բխում են նրանց ուսուցիչ-ղեմոկրատական բնահայացներից: Ռուս ուսուցիչ-ղեմոկրատները ժողովրդական բանահյուսությունը դիտում էին առօրյա կյանքի ու հասարակական-քաղաքական պայքարի հետ ունեցած անմիջական կապերի մեջ և այդ առօրյայի կոնկրետ պահանջների դիրքերից:

Ընկ. Ղանալանյանի աշխատության վերջին գլուխը նվիրված է ժողովրդական բանահյուսության ակտուալ-քաղաքական նշանակությանը: Այստեղ էլ հեղինակը բարեխիղճ ու շնորհակալ դործ է կատարել: Հետադոտելով մարքսիզմի կլասիկների՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի երկերը, նա քաղել է այն բոլոր օրինակներն ու զեպերը, երբ նրանք իրենց միտքն ավելի հատուկ ու նստակապաց դարձնելու համար օգտագործել են ժողովրդական բանահյուսության այս կամ այն կերպարները, առանձին ստեղծագործություններ: Առավել հետաքրքրություն են ներկայացնում ժողովրդական առածների օգտագործումը: Այդ փաստերից ընկ. Ղանալանյանը ճշմարտացի հետևություն է անում ժողովրդական բանահյուսության ակտուալ-քաղաքական նշանակության մասին:

Ինչպես տեսնում ենք, ընկ. Ղանալանյանի աշխատության մեջ արծարծվում են ժողովրդական բանահյուսության մի շարք հարցեր: Մի քանի հարցեր նա հանդամանորեն քննել ու սլարդարանել է, իսկ որոշ հարցեր միայն շոշափել, ինչպես, օրինակ, ժողովրդական բանահյուսության ոեակիզմն ու ժողովրդայնությունը, ժողովրդական բանահյուսության տեղը ազգային կուլտուրայի մեջ, ժողովրդական բանահյուսության և դեղարվեստական գրականության փոխհարաբերությունը և այլն: Ցանկալի էր, իհարկե, նաև վերոհիշյալ հարցերի հանդամանորեն ու խորագնին քննությունը, բայց այդ արդեն գրախոսվող աշխատության պահանջներից զուրս է: Ընկ. Ղանալանյանի այս աշխատությունը կարևոր ներդրում է մեր դրականագիտության մեջ:

* * *

Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած մյուս աշխատությունը, որի մասին ցանկանում ենք խոսել՝ «Քյոռ-օղլի էսոսի բրդական սլափումներն» է, որի զրառումը, թարգմանությունը կատարել և ներածությունը գրել է ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հաջիե Ջնդին: Այս աշխատությունը մի լավագույն ավանդ է ժողովուրդների բարեկամության մեծ գործում, եզրայրական ազդերի կուլտուրական ու

դրական փոխադարձ կապերի հարստացման ու ամրապնդման գործում: Եվ պատահական չէ, որ որպես ժողովուրդների բարեկամության ու եղբայրության սիմվոլ տվյալ ղեպքում հանդես է գալիս Քյոո-օղլի էպոսը:

Էպիկական ժողովրդական ստեղծագործությունների մեջ Քյոո-օղլի էպոսը առանձնահատուկ տեղ է դրավում իր ինտերնացիոնալ լայն կապերով, ազդադրական ու տեղադրական լայնապարփակ ընդդրկմամբ և իսկական ժողովրդայնությունում ու մասսայականացմամբ: Կովկասի, Միջին Ասիայի ու Մերձավոր Արևելքի դրեթե ընդհանուր ժողովուրդների բանահյուսության մեջ հիշվում է Քյոո-օղլին: Նա ընդհանուր ղեպքերում հանդես է գալիս որպես աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան, ժողովուրդների եղբայրության ու բարեկամության ջատագով: Այդ պատճառով էլ Քյոո-օղլու մասին հյուսված վեպերը, հերթաթյունները, երգերն ու ամանդություններն ընդունելով տարբեր ժողովուրդների ազդադրական կոլորիտն ու երանդները, իրենց զաղափարական բովանդակությամբ ու ընդհանուր նպատակադրությամբ կուռ ու միասնական են: Բհարկե, Քյոո-օղլին որպես ամբողջական էպոս իր ձևավորումն ստացել է ադրբեջանական ժողովրդի մոտ և դարձել ադրբեջանական ազգային կուլտուրայի անմահ կոթողը: Սովետական Ադրբեջանում ոչ միայն հրապարակվել է Քյոո-օղլու ամբողջական վեպը, այլ նաև էպոսի սյուժեի հիմքի վրա ստեղծվել է ադրբեջանական նույնանուն կլասիկ ազգային օպերան, որը լայն ժողովրդայնություն է վայելում Սովետական Միության ժողովուրդների մոտ:

Լայն ժողովրդայնություն ու մասսայականացման շնորհիվ Քյոո-օղլի էպոսն ունեցել է բազմաթիվ վարիանտներ կովկասյան և արևելյան շատ ժողովուրդների մոտ (թուրքմեններ, հայեր, վրացիներ, քրդեր և այլն): 1941 թ. Արմֆանի հրատարակությամբ լույս տեսավ «Քյոո-օղլի» էպոսի հայկական վարիանտները, որը հավաքել և պրի էր առել բանահավաք Գ. Թարվերդյանը: Վարիանտներից բացի բազմաքանակ ավանդություններ են ստեղծվել Քյոո-օղլու անձնավորության, ձիու, բերդի և նրա հետ կապված տեղանունների մասին:

«Քյոո-օղլի» էպոսի ամեն մի նոր վարիանտ ու նրա մասին նոր տեղեկություն կարևոր նշանակություն է ստանում այդ էպոսի ինտերնացիոնալ բնույթի լուսարանման և զաղափարական բովանդակության հարստացման տեսանկյունից:

Հենց այս առումով էլ պետք է դնահատել բնկ. Հ. Ջնդիի աշխատանքը: Հավաքելով Քյոո-օղլու մասին բուրդ ժողովրդի մեջ պատմվող վարիանտները և միացնելով մինչ այդ դրի առնված քրդական մի քանի այլ վարիանտների հետ, այդ ընդհանուր նա հրատարակել է առանձին գրքով՝ «Քյոո-օղլի էպոսի քրդական պատումները» խորագրով: Աշխատությունը, բացի տեքստերից ու ծանոթագրություններից ունի նաև ընդարձակ ներածություն, որտեղ հեղինակը համառոտակի նշելով ադրբեջանական և քուրդ ժողովրդի բարեկամության, տնտեսական, բազաքական և կուլտուրական կապերի դարավոր հնություն մասին, հանդամանորեն կանգ է առնում քրդական պատումների մեջ Քյոո-օղլու անձնավորության պատմականության հարցի վրա: Հիմնվելով պատմական հավաստի աղբյուրների վրա, Հ. Ջնդին գտնում է, որ Քյոո-օղլի էպոսի պատմական հիմքը XV դարի վերջի և XVI դարի սկզբի ադրբեջանական և նրա հարևան ճնշված ժողովուրդների ապստամբություններն է ընդդեմ թյուրքական ու իրանական սաստկացող բռնակալության:

Ներածության մեջ հեղինակը անդրադառնում է նաև Քյոո-օղլի էպոսի քրդական պատումների զաղափարական բովանդակությանը, որտեղ գրեթե ամբողջովն է աշխատավոր ժողովրդի ներքին, սոցիալական կյանքի պատկերը, օտար և հայրենի հարստահարիչների շահատակությունները և դրա դեմ դուրս եկած Քյոո-օղլու «իպիթների» ազատագրական-հերոսական պայքարը: Թեև Քյոո-օղլի էպոսը իր հիմքով ղերադանցապես պատմական-իրական է, այնուամենայնիվ այստեղ, ինչպես հատուկ է ժողովրդական բանահյուսությանը, տեղ են գտել նաև դիցարանական մոտիվներ: Հեղինակը խոսում է նաև դիցարանական այդ մոտիվների մասին, հաճախ դուրսհաններ անցկացնելով այլ ժողովուրդների էպոսների հետ: Վերջում հեղինակը խոսում է Քյոո-օղլի էպոսի քրդական պատումների արվեստի մասին, ցույց տալով կերպարների, լեզվի, արտահայտչական միջոցների առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ պատումների մեջ Քյոո-օղլու կերպարը ներկայացվում է, հարադատ Ֆեայով ադրբեջանական էպոսի ընդհանուր դժերին: Քրդական պատումների մեջ էլ Քյոո-

օղիին քաջ ու համարձակ է, միաժամանակ զգայուն սիրահար-երգիչ: Քյոռ-օղին միշտ անբաժան է հավատարիմ ձիուց և նվիրական սաղից: Քրդական պատումներում էլ հանդես են գալիս կանացի հերոսական կերպարներ՝ Նիգյար խանումը և Դոնա խանումը, որոնք անձնվիրություն, աղատ ու անկաշկանդ սիրո դադափարների կրողներն են: Այս բոլորով հանդերձ քրդական պատումները աղբյուրային էություն ունենալով, էպոսի հերոսներին, տեղանուններին ու միջավայրի մեջ մտցնելով քրդական ազգային կոլորիտ, կենցաղի, սովորությունների ու լեզվի առանձնահատուկ գծեր:

Սակայն, ճշմարտությունը պահանջում է շեշտել, որ հիշյալ աշխատության մեջ ոչ բոլոր պատումներն են հաջողված: Ընտրության մեջ հեղինակը բժախնդիր չի գտնվել, ահա թե ինչու վառ ու գունեղ պատումների հետ մեկտեղ հանդիպում ենք անարտահայտիչ, ձգձգված ու թույլ, դեղարվեստորեն անկատար պատումների, որոնք մասամբ բանասացի պատմողական շնորհի պակասության արդյունք են, մասամբ էլ զրի առնողի անուշադրության: Այդպիսիք են, օրինակ՝ «Քյոռ-օղին ու իր տղա Հասանը», «Քյոռ-օղին քաջ է դառնում», «Քյոռ-օղին ամոթով չի մնում» և մի քանի այլ վարիանտներ: Թերություններ կան նաև քրդական տեքստերի հայերեն թարգմանությունների մեջ: Տեղ-տեղ քրդական ժողովրդական դարձվածքներն ու արտահայտությունները բառացի են թարգմանված, մինչդեռ հնարավոր էր նրանց համազոր արտահայտություններ ու ոճեր գտնել հայերենում: Մի քանի օրինակ՝

«Օ թե դ ու ք ե գ ար ժ ա ն ի խ ո ս ք տ ա ս ի ն ձ» (էջ 129), «... Ս ի ր տ ր է ր վ ի, կ ր ա կ ն ը ն կ ն ի» (էջ 123), «Հ ի մ ա ճ ա ն փ ե ս ե ն ն ա յ ու մ» (էջ 73), «... Ի ա ր կ ու թ յ ա ն ը չ ա փ ու ս ա հ մ ա ն չ ի վ ի ն ու մ» (էջ 91) և այլն:

Այս բոլորով հանդերձ «Քյոռ-օղի էպոսի քրդական պատումները» աշխատությունը կարևոր նշանակություն ունի էպոսի մյուս վարիանտների շարքում: Որախոսելի է այն, որ աշխատության ներածությունը տրված է նաև ռուսերեն թարգմանությամբ և տեքստի հայերեն թարգմանության հետ միասին կա նաև քրդերեն բնագիրը:

Ա. ՆԱԶԻՆՅԱՆ